

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ - ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆ
(Գառնիկ Շախկյանի ծննդյան 70-ամյակի առթիվ)

Քառասունհինգ տարուց ավելի է, ինչ ճարտարապետության դոկտոր, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի պրոֆեսոր Գառնիկ Շախկյանը, նվիրվելով ճարտարապետի մասնագիտությանը, կատարում է արդյունավետ աշխատանք հայ ժողովրդի ճարտարապետական ժառանգության հետազոտման և պրոպագանդման, կադրերի պատրաստման, նախագծման բնագավառներում, վայելելով ճանաչում ու հեղինակություն: Նա հեղինակ կամ համահեղինակ է 25-ից ավելի հասարակական և բնակելի - քաղաքացիական շենքերի, կառույցների (Արմավիր և Մարտունի քաղաքներում հյուրանոցներ, Հայաստանի գրողների միության Ծաղկաձորի ստեղծագործական տունը, Ալավերդու քաղաքապետարանի վարչական շենքը, Ծաղկաձորի մանկական ճամբարը, մատուռ՝ Նեղոցում, առանձնատներ, հուշակառույցներ և այլն), որոնք բարի համբավ են վայելում: Շախկյանը տասնյակ գիտական աշխատությունների, մենագրությունների, հարյուրավոր հոդվածների, հրապարակումների հեղինակ է:



Գիտնական - մանկավարժի առաջին հատկանիշը հայրենասիրությունն է, որ դրսևորվում է նրա գործունեության բոլոր բնագավառներում: Նա կարևոր շատ խնդիրների լուծման, հետազոտության հեղինակ է. դրանք վերաբերում են հայ համընդհանուր ճարտարապետության պատմությանն ու տեսությանը, արդի ճարտարապետությանը, դրա կապերին և առնչություններին: Հետազոտել և ներկայացրել է հուշարձաններ, որոնք քիչ են ուսումնասիրված կամ սակավ են հայտնի մասնագիտական շրջաններին: Ուսումնասիրել է առավելապես ճարտարապետության ոլորտի համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրներ, որոնք արդիական են, հեռանկարային, նաև խնդրառու, մտահոգիչ: Որպես կանոն, Շախկյանի ուսումնասիրություններն ավարտուն են, ամբողջական, ներկայացված են փաստական հարուստ հենքի վրա: Ամուր կապված լինելով Լոռու բնաշխարհի հետ, գիտնականի հետազոտություններում կարևոր տեղ են զբաղեցնում երկրամասի պատմությունն ու մշակույթը, որի դրսևորումներից է «Լոռի. պատմության քարակերտ էջերը» մենագրությունը (Երևան, 1986): Դրանում Լոռու հուշարձանները քննվում են ճարտարապետական - հատակագծային, կառուցողական և գեղարվեստական առումներով՝ պատմահամեմատական հարուստ նյութի, ուշագրավ գուգորդումների և աղերսների շրջանակում, բացահայտվում են դրանց առանձնահատ-

կույթունները, կրած փոփոխությունները: Տեղին և շահեկան ներկայացված է Լոռու ճարտարապետական զարգացմանը նպաստ բերող պատմագիտական ողջ նյութը՝ գիտական ուսումնասիրությունները, հնագիտական պեղումների արդյունքները: Պատմաշխարհագրական պայմանների բերմամբ XI–XIV դդ. հայ-վրացական ճարտարապետական մերձությունն ամենից ակնհայտ արտահայտվում է Լոռու հուշարձանների (Ախթալա, Քոբայր, Հնեվանք, Բգավոր, Մեծավան և այլն) օրինակով: Եվ հայ-վրացական ճարտարապետական կապերի շահեկան քննությունն իր ողջ խորությամբ և էությամբ աշխատության կարևոր արժանիքներից է:

«Օձունի եկեղեցին» (Երևան, 1983) մենագրության մեջ հայ ճարտարապետության անկյունաքարային այդ հուշարձանն առաջին անգամ ենթարկվել է համակողմանի և ամբողջական քննության՝ կառուցման ժամանակով և հորինվածքով մոտ գտնվող հուշարձանների լայն տեսադաշտի վրա. բացահայտվել են հատակագծային և ծավալատարածական հորինվածքների ակունքները, ծագումնաբանական կապը հայկական բազիլիկ կառույցների հետ, կառուցման ժամանակը, հավելումների և վերակառուցումների ուղին, հայ ճարտարապետության մեջ գրաված տեղը: Հիմնավոր փաստարկներով հերքվում են կամ ճշգրտվում մասնագիտական գրականության մեջ տեղ գտած մի շարք կարծիքներ, որոնք վերաբերում են նախապես գոյություն ունեցած բազիլիկ հիմքի վրա ներկայիս եկեղեցու կառուցմանը, արտաքին սրահի երկայնական թևերի կառույցների հետագա հավելում լինելուն, ենթադրվող վրացաոճությունը և այլն: Այնպես որ, շատ կարևոր է ոչ միայն մշակութային արժեքների ստեղծումը, այլև դրանց իմացությունը, դրանք սեփական ժողովրդին և ուրիշներին ներկայացնելը, ինչը շատ անհրաժեշտ է հատկապես մեզ՝ հայերիս, որ աշխարհի բազմաթիվ վայրերում ենք ստեղծել արժեքներ, որոնցից շատերն այսօր վերացել են, իսկ մնացածներին էլ վերացման վտանգ է սպառնում:

Հատկապես օտար ընթերցողներին հայ ճարտարապետությունը ներկայացնելու առումով կարևոր է Գ. Շախկյանի «Խորհրդային Հայաստանի ճարտարապետական հուշարձանները» եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) և հարուստ պատկերագրությամբ աշխատությունը (Երևան, 1989): Ոչ մեծ ծավալի շրջանակում շոշափելիորեն ներկայացված է հայ ժողովրդի մի քանի հազարամյա շինարարական կյանքի քարակերտ տարեգրությունը: Ուրույն տեղ է հատկացված քրիստոնեական դարաշրջանի ճարտարապետությանը՝ ազգային նկարագրի կազմավորման, հասունության և կատարելության հաստատման որոշիչներով: Ժամանակագրական կարևոր անցումներով և պատկերավոր բնութագրումներով հառնում են մեկը մյուսից շքեղ և առինքնող հուշարձաններն ու հուշարձանախմբերն՝ իրենց ողջ հմայքով և կատարելությամբ:

Հայ ճարտարապետությունը ներկայացնելու խնդրին է ուղղված նաև «Հայ ճարտարապետության յոթ հրաշալիքներ» (Երևան, 2001) ուշագրավ աշխատությունը, որում քննվում են առավել նշանակալից, պայմանականորեն «հրաշալիք» ճանաչված յոթ հուշարձաններ (Զվարթնոցի եկեղեցին, Անիի Կաթողիկեն, Աղթամարի եկեղեցին, Գառնիի տաճարը, Հաղպատի վանքը, Գեղարդի վանքը, Գանձասարի վանքը)՝ իրենց առանձնահատկություններով, ճարտարապետական-շինարարական, գեղարվեստական-կառուցվածքային լուծումներով և ազգային նկարագրով:

Հայ ժողովրդի ստեղծագործական կյանքը հաճախ է խաթարվել օտար պետությունների հարձակումների, տնտեսական, ռազմական ճնշումների և այլ պատճառներով: Այդպիսի մի դարաշրջան են կազմել VIII–IX դդ., երբ, ինչպես ներկայացվում է մասնագիտական գրականության մեջ, «Հայաստանում քարը քարի վրա չի դրվել» (Թ. Թորամանյան և ուրիշներ): Այդ դարաշրջանին է վերաբերում Գ. Շախկյանի «Հայ ժողովրդի ճարտարապետական-շինարարական գործունեությունը VIII–IX դարերում» մենագրություն-դասագիրքը (Երևան, 2004), որում հեղինակը համոզիչ կոմպաններով հիմնավորում է, որ այդ ժամանակաշրջանում, երբ Հայաստանը հիմնականում գտնվում էր արաբական խալիֆայության տիրապետության տակ, չնայած հարկային ծանր քաղաքականությանը, նյութատնտեսական հիմքի անհամեմատ նեղացմանը և ռազմաքաղաքական ճնշմանը, երկրում շինարարական աշխատանքը չի դադարել, կառուցվել են եկեղեցիներ, պալատական, ամրաշինական և այլ շինություններ, որոնք կարևոր են դարաշրջանը ճարտարապետական - շինարարական առումով բնութագրելու համար: Ճարտարապետության նշանավոր տեսաբան Հովհ. Խալիֆադյանը, բարձր գնահատելով աշխատությունը, մասնավորապես շեշտում է նրա գիտագործնական արժեքը. այն ամբողջացնում է հայ բազմադարյան ճարտարապետության ձևավորման գործընթացը: Իրոք, այն արժեքավոր ներդրում է պատմատեսական գիտության հարստացման, հայ ճարտարապետական մշակույթի 180-ամյա շրջանն ընդգրկող սպիտակ էջերը լրացնելու առումով:

Հայաստանում ճարտարապետական և շինարարական բարձրագույն կրթության 80-ամյա պատմությանն է նվիրված Գ. Շախկյանի և Ա. Բեգլարյանի «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» գիրքը (Երևան, 2003), որում հանգամանալից շարադրանքով ներկայացված է այն արգասաբեր ուղին, որով անցել է, բարձր զարգացում ապրել և մեծ հաջողությունների հասել հայոց ճարտարապետաշինարարական դպրոցը: Գրքի էջերից հառնում են այն երախտավորների կերպարները, ովքեր իրենց ուսերին կրեցին և հաղթահարեցին նրա երկունքին ուղեկցող դժվարությունները:

Հայրենի գյուղի, նրա մարդկանց գործունեության և բնաշխարհի համապարփակ հետազոտության հանրագումարն է ծավալուն ու հիմնարար «Կայծոն-Շնող» (Երևան, 1999) հայրենագիտական աշխատությունը, որի գիտաճանաչողական և իմացաբանական արժեքը հատկապես գնահատելի է պատմամշակութային նյութը բացահայտելու, մոռացումից և անհետացումից փրկելու առումով: Հայրենի բնաշխարհի հետ ունեցած հարազատ կապը դրսևորվել է նաև մեկ ուրիշ արժեքավոր աշխատանքով, որը կոչվում է «Պատկերազարդ կենսագրական հայրենագիտարան» (Երևան, 2004)՝ նվիրված Շնողից ելած ճանաչված և անվանի մարդկանց, մտավորականներին: Իր հայրենակիցների մի սերնդի ճակատագիրն է դա, անցած-գնացածը, նաև ներկան, նրանց որոնումները, վերելքներով և վայրէջքներով ճանապարհը, հոգևոր ու բարոյական արժեքները:

Մի առիթով Գ. Շախկյանը գրել է. «Երկար տարիներ զբաղվելով Լոռու ճարտարապետական դպրոցի հուշարձանների և մշակույթի ուսումնասիրությամբ, բնականաբար, մոտիկից առնչվել եմ Թումանյան մարդու և նրա ստեղծագործական ժառանգության հետ: Դա հատկապես վերաբերում է վերջին տարիներին, երբ կապված «Թումանյանական հանրագիտա-

րան»-ի ստեղծման խնդրի հետ, ավելի ընդհուպ մոտեցա Թումանյանին, ճանաչելով նրան ոչ միայն որպես Ամենայն հայոց բանաստեղծի, հասարակական մեծ գործչի, այլև մարդու, որ շոշափելի հետք է թողել նաև մշակույթի ամենատարբեր ոլորտներում, այդ թվում՝ հայրենագիտական բնագավառում¹: Եվ ստեղծվեց Շախկյանի կարևոր աշխատություններից մեկը ևս՝ «Հովհաննես Թումանյան. հայրենագիտական համանվագներ» (Երևան, 2005) խորագրով: Դրանում բացահայտված են մեծ գրողի հանիրավի ուշադրության չառնված հայրենագիտական շերտագրությունները, ներշնչանքը, սերը հայրենի բնաշխարհի նյութական և ոգեղեն գանձերի հանդեպ, որոնք կազմել են գրողի էության մասը, գործունեության ուղեկցող զիծը՝ դառնալով ստեղծագործական պոռթկումների և հայրենասիրական դրսևորումների հորդահոս աղբյուր: Արժարժվող հիմնախնդիրների կարևորությամբ, քննական-վերլուծական ուղղվածությամբ, հիմնավորվածությամբ հայ ճարտարապետության տեսության և պատմության ընտրանիի մեջ կարող են ընդգրկվել գիտնականի մասնագիտական մեծաթիվ հոդվածներից շատերը: Շախկյանն իր դարաշրջանի զավակն է, բացի զուտ ճարտարապետությունից, նրան հուզում են նաև մասնագիտությանը հարակից արդիական, կենսական խնդիրներ, որոնց ևս անդրադարձել է խոր և տպավորիչ վերլուծություններով: Հատկապես նկատի ունենք «Ժամանակակից միջնադարյան եկեղեցաշինություն» («Քրիստոնյա Հայաստան», 2004, ապրիլ, Բ), «Ճարտարապետական հուշարձանները Լոռու սոցիալական զարգացման երաշխիք» («Լոռու մարզ», 8. VI. 2005), «Հանուն ոգու և արդիականության» («Գիտություն և տեխնիկա», 2006, -9, էջ 20–28), «Հանուն բնության և բնականության պահպանման» («Հայաստան», 14. VI. 2007) և այլ հրապարակումները:

Ծանոթ լինելով «Թումանյանական հանրագիտարանի» գծով գիտնական - ճարտարապետի կատարած եռանդուն աշխատանքին և դատելով այդ ուսումնասիրությունից մամուլում տպագրված հրապարակումներից, համոզված ենք, որ ստեղծվելու է մի եզակի և հիմնարար հանրագիտական աշխատություն: Ծանոթանալով Շախկյանի նորերս լույս տեսած «Կենսամատենագիտության» (Երևան, 2007) բովանդակությանը, հիացմունքի ու հպարտության պահեր ապրեցինք նրա ստեղծած պատկառելի և ուսանելի գիտական ժառանգության հանդեպ: Նորի և կատարյալի որոնումները, կարծիքների ու եզրահանգումների փաստարկվածությունը, քննական-վերլուծական մոտեցումները Գ. Շախկյանի հետազոտական գործունեության հիմնական հատկանիշներն են: Հիրավի, արգասաբեր և ուսանելի կյանք, նվիրում, անանձնական ջանքեր, որոնք, վստահ ենք, դեռ պիտի շարունակվեն:

ՌՈՄԱՆՈՍ ՄԱՀԱԿՅԱՆ
ՎԱՐՇԱՍ ԱՎԵՏՅԱՆ

¹ Ճարտարապետ Գանիկ Շախկյան. Կենսամատենագիտություն, Երևան, 2007, էջ 14: